

ԶՕՀՐԱՊ ԵՒ ԻՐ ՎՐԻՊՈՒՄՆԵՐԸ

(Բանախօսություն Պ. ՇԱԽԱՐՇ ՄԻՍԱԲԵԱՆԻ)

Տիկիներ, պարոններ,

Երիտասարդ մըն է որ կը յաւակնի իր նկատողութիւններն յայտնել անդրանիկի մը գրական գործունեութեան մասին: Գժուար թէ կարելի ըլլար երեւակայել աւելի ապերախտ դեր մը:

Ամէն բանէ առաջ, հետաքրքիր էր բնորոշել Զօհրայի գրական գործունեութեան էութիւնը: Ի՛նչպէս սկիզբ առած է այդ գործունեութիւնը, ի՛նչ է իր իսկ հայեցողութիւնը այդ մասին:

Իր նորավէպերուն մէկուն՝ *Կարծէմ թէին* մէջ կը կարդաք սա հատուածը.

«...Ես տարիէ մը ի վեր Աննիկէն բաժնուած էի, այն խօյարշաւին մէջ գոր կը մղէի կնոջական գրօսանքներու համար, աւելի հետաքրքիր ուղեւորի մը պէս քան թէ ճշմարիտ վայելքի մը սիրոյն»:

Արշավ մըն ալ իր գրականութիւնը: Աւելի մօտենալու համար իրերու ճշգրիտ հասկացողութեան, դուք պարտաւոր էք, ամէն բանէ առաջ, նկատողութեան առնել նոյն ինքն հեղինակը, իր կեանքն եւ ըմբռնումները: Ապրած, օր տեսած մարդ, Զօհրայ աւելի իր փորձառութիւններն է որ կը պատմէ, – թերեւս յուշատետրէ քաղուած էջեր, – երբ հարկ զգայ պահ մը մեկուսանալ իր հոգերէն: Կը պատմէ ու կ'անցնի: Չի խորասուզուիր կեանքի յորձանքին մէջ: Ուղեւոր մըն է որ տարօրինակ պատմութիւններ կը գրուցէ, անցքեր կը նկարագրէ, աւելի մղուած «խօլ արշաւի» մը հաճոյքէն քան արուեստագէտի մտահոգութեամբ, արտադրող՝ ստեղծագործող մարդու տենդով ու անոր երկունքով: Չունի հորիզոն, չունի որոնումներ: Յաճախ խոստովանահայր մըն է որ իր մտերմութիւնները կը հաղորդէ, այնքան մանրամասն, մինչեւ սկիզբը եւ վախճանը,